

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2015
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ՝

Լ.Մուրադյանի
Դ.Սամսոնյանի
Մ.Քարպաշյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
ղեկավար՝

Փ.Կարապետյանի

ՀՀ հանրապետական գործադիր մարմինների
տարածքային ծառայությունների և այլ մարմինների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայության
առողջապահական կազմակերպությունների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ

**1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2015 թվականի
օգոստոսի 31-ի նիստի օրակարգը հաստատելու մասին**

/Ա.Ղահրամանյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ/

**2. ՀՀ Արմավիրի մարզում «Շանթ-2015» ռազմավարական
հրամանատարաշտաբային զորավարժության կազմակերպման և անցկացման
միջոցառումների մասին**

/Ա.Ղահրամանյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ
Փ.Կարապետյան- ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար/

3. ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցներում «Գիտելիքի օրվա»՝ Սեպտեմբերի 1-ի, միջոցառումները կազմակերպելու նախապատրաստական աշխատանքների մասին

/Ա.Ղահրամանյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ/

4.Հայտարարություններ՝

Յու.Մանվելյան -

**ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
իրավաբանական բաժնի պետ**

Օրակարգային առաջին հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը մարզի խորհրդի նիստի հաստատմանը ներկայացրեց իր սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2015 թվականի օգոստոսի 31-ի նիստի օրակարգը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.10 –րդ կետի 13-րդ պարբերությամբ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2015 թվականի օգոստոսի 6-ի նիստի օրակարգը:

Օրակարգային երկրորդ հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը մարզի խորհրդի նիստի մասնակիցներին իրազեկ պահելով 2015 թվականի սեպտեմբերի 3-ից 6-ը կայանալիք «Շանթ-2015» ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժության մասին, հակիրճ կարգով նշեց միջոցառման կարևորությունն ու կատարողական բարձր մակարդակի ապահովման անհրաժեշտությունը: Այնուհետև « ՀՀ Արմավիրի մարզում «Շանթ-2015» ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժության կազմակերպման և անցկացման միջոցառումների մասին » օրակարգային հարցի առնչությամբ ՀՀ Արմավիրի մարզպետը զեկուցման համար ծայնը Կրվեց ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ.Կարապետյանին: Տիկին Փ.Կարապետյանը, նույնպես կարևորելով անցկացվելիք միջոցառումը, հանգամանորեն ներկայացրեց այն բոլոր խնդիրները, որոնք կապված են միջոցառման անցկացման հետ, ակնկալելով դրանց կատարման բարձր մակարդակի ապահովումը:

Օրակարգային երրորդ հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը նախապես շնորհավորելով բոլորին «Գիտելիքի օրվա»՝ **Սեպտեմբերի 1-ի** կապակցությամբ, նշեց, որ մենք միշտ էլ կրթությանն ու նրա անփոխարինելի դարբնոցին՝ դպրոցին , սրբորեն ենք վերաբերվել, քանի որ այն դարերի հոլովույթում մեր ազգային արժեհամակարգի կարևորագույն ու բաղկացուցիչ հիմնասյուներից մեկն է եղել:

Անշուշտ, փարվա օրերի մեջ սեպտեմբերի 1-ը առանձնանում է՝ ալեկոծելով դպրոցականի, ուսուցչի, ծնողների, բոլորիս սրտերն ու հոգիները, որովհետև սկսվում է հույսերով, իղձերով և նվիրական ցանկություններով լի ուսումնական տարին,

գիտելիքներով հարստանալու ու նոր արժեքներ ճանաչելու շրջանը: Այն ամփոխարինելի տոն է, որն ուղեկցել և ուղեկցելու է մեզնից յուրաքանչյուրին՝ մեր ողջ կյանքի ընթացքում:

Ամեն տարի այդ օրը մենք դիմավորում ենք առանձնահատուկ հանդիսությամբ, քանզի գիտելիքի ու կրթության նկատմամբ սերը և ձգտումը հազարամյակներ շարունակ եղել են հայ ժողովրդի գերագույն արժեքներից մեկը: Այն նաև մեր երկրի զարգացման ու հզորացման կարևորագույն գրավականն է: Պետության վաղվա օրը իրապես երաշխավորված է, եթե հասարակությունը կրթված է: Այս ամենն առավել ևս կարևորվում է ներկայումս, երբ կայացած անհատը դառնում է հասարակության շարժիչ ուժը:

Պետության մտահոգությունը՝ արդի աշխարհում բազմակողմանի զարգացած, պատշաճ կրթություն ստացած, ազգային արժեքներ կրող և պետականության զգացումով քաղաքացիների դաստիարակումն է: Այս ճանապարհին, անշուշտ, դեռևս բավականին անելիքներ կան: Մենք բոլորս քաղաքացիական բարձր պատասխանատվություն ունենք մասնակցելու հայրենասեր, բանիմաց ու կիրթ հասարակության կայացման գործընթացին:

Համոզված եմ, որ ձեռքբերվող գիտելիքները, հայեցի կրթությունն ու ազգային արժեքների ոգով դաստիարակությունը կնպաստեն սեփական ունակությունների ու կարողությունների դրսևորմանը գործնական կյանքում:

«Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը կրկին անգամ շնորհավորելով մարզի խորհրդի նիստի մասնակիցներին գալիք նոր ուսումնական տարվա սկիզբն ավելորդ «Գիտելիքի օրվա»՝ Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ՝ մարզի համայնքների ղեկավարներին կոչ արեց իրենց համայնքներում գործող դպրոցների տնօրենների հետ համատեղ ձեռնարկել համապատասխան միջոցներ տոնական այդ օրն ավելի հիշարժան դարձնելու համար:

Օրակարգային հարցերի քննարկումից հետո արտադատական կարգով վարչական վարույթին առնչվող խնդիրներին իր հայտարարությամբ հանգամանորեն անդրադարձ կատարեց «Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Յու.Մանվելյանը: «Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը անդրադառնալով հայտարարությանը, մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց օգտվել օրենսդրությամբ ընձեռնված հնարավորություններից և համայնքներում վարչական վարույթի գործերն իրականացնել արտադատական կարգով:

Օրակարգային հարցերի ու հայտարարության համապատասխանաբար քննարկումներից ու ամփոփումից հետո «Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Արձ.՝ Դ. Դավթյան